ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 3(83), 25 ԱՊՐԻԼ, 2026թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԹԱՅԵՔՍ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Ապրիլի 1-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր Մ. Մուրադյանն ընդունել է ԹԱՅԵՔՍ փորձագիտական առաքելության ներկայացուցիչներին:

Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնի ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում քննարկվել են սահմանապահ զորքերի վերապատրաստման և կրթական համակարգի զարգացման, մարդկային ռեսուրսների կառավարման արդիականացման, ինչպես նաև կարողությունների վրա հիմնված կադրերի հավաքագրման, կարիերայի զարգացման և մարդկային ռեսուրսների քաղաքականության առնչվող հարցեր: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ներառականության, գենդերային հավասարության ապահովման և էթիկայի նոր կանոնագրքի պահանջներին համապատասխանության խնդիրներին:

Կողմերը կարևորել են նաև ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի ուսուցման համակարգի բարեփոխման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով Սահմանապահ զորքերի նոր ռազմավարական ուղղությունները:

Ռեկտոր Մ. Մուրադյանը բարձր է գնահատել ԹԱՅԵՔՍ փորձագիտական առաքելության շրջանակում իրականացվող աշխատանքները՝ ընդգծելով, որ Կրթահամալիրը պատրաստ է շարունակել և ընդլայնել համագործակցությունը միջազգային գործընկերների հետ կրթական և կարողությունների զարգացման ոլորտներում:

Փորձագիտական առաքելության կազմում ընդգրկված ՖՐՈՆՏԵՔՍ-ի ներկայացուցիչն իր հերթին նշել է, որ պատրաստակամ են համագործակցել Կրթահամալիրի հետ՝ հատկապես կրթական բաղադրիչի զարգացման ուղղությամբ:

Հանդիպումն անցել է կառուցողական մթնոլորտում՝ ընդգծելով փոխգործակցության և փորձի փոխանակման կարևորությունը՝ իրավապահ համակարգի շարունակական բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով:

ԽՈՆԱՐՀՈՒՄ ՄԵՐ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻՆ՝ ՀԱՆՈՒՆ ԱՊԱՀՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Շնորհավո՛ր մասնագիտական տոնդ, հայրենիքիդ ու ժողովրդիդ անմնացորդ նվիրումով ծառայող ոստիկա՛ն

Հայաստանի Հանրապետության պետականության կայացման ու ամրապնդման ճանապարհին առանձնահատուկ դերակատարում ունի ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը, որի տարեդարձը ոչ միայն մասնագիտական տոն է, այլև հանրային անվտանգության ու իրավակարգի պահպանման խորհրդանիշ:

Հարգելի՛ ոստիկան, Հայաստանի Հանրապետության ժողովուրդը՝ ի դեմս ձեզ, ունի կայացած և ամուր պետական կառույց: Դուք արժանապատվորեն և լիարժեք իրականացնում եք ձեր առաքելությունը:

Գաղտնիք չէ, որ ոստիկանության աշխատանքը որևէ երկրում և մանավանդ Հայաստանում միշտ գտնվում է հասարակության ուշադրության կիզակետում, և ոստիկանի վարքն ու դիմագիծն ուղղակիորեն կապվում են երկրի և պետության նկարագրի հետ: Վերջին շրջանում Ոստիկանության համակարգում բարեփոխումների տևական շղթայի արդյունքում ակնհայտ է դրական տեղաշարժը, որը նաև արդյունք է հոգեբանական փոփոխության, որ տեղի է ունենում մեր հասարակության մեջ:

Տարիների ընթացքում ոստիկանությունը ձևավորվել և զարգացել է՝ դառնալով ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, օրենքի գերակայությանն ու մարդու իրավունքների պաշտպանությանը միտված կառույց: Նրա գործունեության հիմքում ընկած է հասարակության հանդեպ պատասխանատվությունը, օրինականության ամրապնդումը և քաղաքացիների անվտանգության ապահովումը:

Ոստիկանության ծառայողը քաղաքացիների վստահության կրողն է, ում դիմում են մարդիկ դժվարին իրավիճակներում: Ոստիկանության համակարգում ծառայող յուրաքանչյուր աշխատակից արժանի է խորին հարգանքի ու գնահատանքի, քանզի ամենօրյա ծառայությունը պահանջում է բարձր պրոֆեսիոնալիզմ, խիզախություն և անձնազոհություն:

Ժամանակակից աշխարհում, երբ հասարակական հարաբերությունները դառնում են ավելի բարդ և բազմաշերտ, ոստիկանության դերն առավել է կարևորվում: Տեխնոլոգիական առաջընթացը, միջազգային համագործակցությունը և շարունակական վերապատրաստումները հնարավորություն են տալիս բարձրացնել համակարգի արդյունավետությունն ու վստահելիությունը:

Այս օրը լավ առիթ է գնահատելու անցած ճանապարհը, արժևորելու ձեռքբերումները և վերանորոգված հավատով շարունակելու ծառայությունը հայրենիքին ու հասարակությանը: Թող ոստիկանության ծառայությունը մշտապես ուղեկցվի հաջողություններով, իսկ մեր երկիրը՝ խաղաղությամբ և անվտանգությամբ:

Շնորհավորելով ոստիկանության աշխատակիցների տարեդարձը՝ մաղթում ենք անխախտ կամք, առողջություն և հաջողություններ պատասխանատու ու պատվաբեր ծառայության մեջ:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ HNS ԻՐԱԶԵԿՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ EU-RESPOND ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ապրիլի 16-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում կայացավ Հյուրընկալող երկրի աջակցության (Host Nation Support, HNS) և ԵՄ քաղաքացիական պաշտպանության մեխանիզմի (UCPM) թեմայով իրազեկման դասընթացը՝ EU-RESPOND ծրագրի շրջանակում:

Դասընթացը միավորել էր Հայաստանի տարբեր պետական կառույցների ավելի քան 25 ներկայացուցիչների՝ նպատակ ունենալով բարձրացնել միջազգային արտակարգ իրավիճակներին արձագանքելու պատրաստվածությունը և խորացնելու համագործակցությունը եվրոպական գործընկերների հետ:

ԵՄ քաղաքացիական պաշտպանության մեխանիզմը (UCPM), որը գործում է 2001 թվականից, հնարավորություն է տալիս համակարգված կերպով արձագանքել խոշոր աղետներին՝ ապահովելով միջազգային աջակցություն: Սակայն նման աջակցությունն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ տուժած երկիրը պատրաստ է ընդունել և համակարգել այն: Այս համատեքստում առանցքային նշանակություն ունի Հյուրընկալող երկրի աջակցությունը (HNS), որը ներառում է մուտքի ընթացակարգեր, մաքսային ձևակերպումներ, լոգիստիկա և համակարգման հստակ մեխանիզմներ:

Ընթացքում մասնակիցներին ներկայացվեցին UCPM-ի կառուցվածքը և հիմնական դերակատարները, քննարկվեցին միջազգային աջակցության դիմումի դեպքում ազգային լիազորությունները, ներկայացվեցին ԵՄ HNS ուղեցույցները: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց այն հարցին, թե ինչպես կարող են հայկական կառույցներն առավել արդյունավետ կազմակերպել միջազգային թիմերի ընդունումն ու ինտեգրումը:

Նշվեց նաև, որ EU-RESPOND ծրագրի (2025–2028թթ.) շրջանակում նախատեսվում է անցկացնել երեք սեղանի վարժանք (TTX), որոնցից առաջինը տեղի կունենա Հայաստանում՝ 2026 թվականի աշնանը: Այս վարժանքները հնարավորություն կտան գործնականում փորձարկել HNS մեխանիզմները, բացահայտել հնարավոր թերությունները և կատարելագործել համակարգերը:

Իրազեկման այս դասընթացը կարևոր առաջին քայլն է՝ ուղղված Հայաստանի պատրաստվածության բարձրացմանը և միջազգային աղետներին արձագանքման ոլորտում փոխգործունակության ամրապնդմանը:

Միջազգային փորձագետների հետ հանդիպում ունեցավ նաև Կրթահամալիրի ռեկտոր Մ. Մուրադյանը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին EU-RESPOND ծրագրի շրջանակում նախատեսվող հետագա քայլերը, մասնավորապես՝ սեղանի վարժանքների կազմակերպմանն առնչվող հարցերը, ինչպես նաև Հյուրընկալող երկրի աջակցության (HNS) մեխանիզմների կատարելագործման հնարավորությունները:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՆԵՐՈՒԺԸ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՎ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում կազմակերպվել է «Դրոններով մրցավազքի Հայաստանի ֆեդերացիա» կրթական, սպորտային հասարակական կազմակերպության կարողությունների ցուցադրություն:

Միջոցառման շրջանակում ներկայացվել են անօդաչու թռչող սարքերի կիրառման ժամանակակից հնարավորությունները, դրանց կառավարման տեխնոլոգիաները, ինչպես նաև 3D մոդելավորման և արհեստական բանականության կիրառման գործնական լուծումները:

Ցուցադրության նպատակն էր Կրթահամալիրի ղեկավարությանը ներկայացնել ոլորտում առկա տեխնոլոգիական ներուժը և համագործակցության հնարավորությունները՝ արտակարգ իրավիճակների կառավարման, աղետների ռիսկի նվազեցման և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում դրանց կիրառման հեռանկարներով:

Միջոցառման ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել անօդաչու թռչող սարքերի կիրառմանը որոնողափրկարարական աշխատանքներում, տարածքների մոնիթորինգում, ինչպես նաև հնարավոր վտանգների գնահատման և սցենարների մոդելավորման գործընթացներում:

Նախատեսվում է, որ Կրթահամալիրի և «Դրոններով մրցավազքի Հայաստանի ֆեդերացիա» կազմակերպության միջև մոտ ապագայում կստորագրվի համագործակցության հուշագիր, որի շրջանակում կիրականացվեն համատեղ կրթական, տեխնոլոգիական և գիտական ծրագրեր:

Նշված համագործակցությունը միտված է Կրթահամալիրում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման ընդլայնմանը և փրկարար ծառայության կարողությունների զարգացմանը՝ համահունչ աղետների ռիսկի կառավարման ժամանակակից պահանջներին:

«ԳԻՏԵԼԻՔ, ՓՈՐՁ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՈՒՆ ԱՆՎՏԱՆԳ ԱՊԱԳԱՅԻ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում շարունակվում է «Գիտելիք, փորձ և համագործակցություն՝ հանուն անվտանգ ապագայի» նախաձեռնությունը, որի շրջանակում 2026 թգ ապրիլի 2-ին կայացել է հերթական՝ երկրորդ մասնագիտական հանդիպում-քննարկումը՝ ուղղված ուսումնական գործընթացի զարգացմանը, մասնագիտական կարողությունների ամրապնդմանը և աղետների ռիսկի կառավարման ոլորտում արդի գիտելիքների փոխանցմանը:

Միջոցառման շրջանակում Կրթահամալիրում հյուրընկալվել էր միջազգային փորձ ունեցող մասնագետ Արա Նազինյանը, որի մասնագիտական գործունեությունը ներառում է աղետների ռիսկերի կառավարումը, կլիմայական փոփոխություններին հարմարվողականությունը, ջրային ռեսուրսների կառավարումը, սոցիալական զարգացումը և ռազմավարական պլանավորումը:

Քննարկման ընթացքում նաև կարևորվել է կրթական հաստատությունների դերակատարությունը ոլորտի զարգացման գործում՝ ընդգծելով ուսանողների մասնագիտական կողմնորոշման, կարողությունների զարգացման և ոլորտում ներգրավման անհրաժեշտությունը:

Արա Նազինյանը ներկայացրել է նաև իր բազմամյա փորձը՝ ընդգրկելով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, ազգային և տարածաշրջանային ծրագրերի իրականացման, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցման ռազմավարությունների մշակման ուղղությունների իրականացված աշխատանքները:

Միջոցառումն անցել է ակտիվ քննարկումների ձևաչափով՝ ներառելով հարցուպատասխան և լսարանի ինտերակտիվ ներգրավվածությունը, ինչը հնարավորություն է տվել մասնակիցներին ստանալ գործնական և կիրառելի գիտելիքներ:

Նման ձևաչափով մասնագիտական հանդիպումները նպաստում են Կրթահամալիրի ուսանողների և դասախոսական կազմի գիտելիքների հարստացմանը, միջազգային փորձի տեղայնացմանը, ինչպես նաև կրթահամալիրի՝ որպես ոլորտային մասնագիտական հարթակի դերի ամրապնդմանը:

Կրթահամալիրը շարունակելու է նախաձեռնությունը՝ ապահովելով ոլորտի առաջատար մասնագետների մասնակցությամբ պարբերական հանդիպումներ և ստեղծելով նոր հնարավորություններ մասնագիտական գիտելիքի և փորձի փոխանակման համար:

«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ. 10 ՏԱՐՎԱ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԻ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում գործող «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիրն այս տարի նշում է իր հիմնադրման 10-ամյակը՝ ամփոփելով անցած տարիների ձեռքբերումներն ու արձանագրելով զարգացման նոր հեռանկարներ:

Ամսագիրը հիմնադրվել է 2016 թվականի մարտի 25-ին՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի թիվ 137-Ա հրամանով: Իր գործունեության ընթացքում այն ձևավորվել է որպես իրավագիտության ոլորտում գիտական մտքի տարածման և մասնագիտական քննարկումների կարևոր հարթակ:

«Օրենքի պատվար»-ում հրատարակվում են իրավաբանական թեմաներով գիտական հոդվածներ՝ եռալեզու ձևաչափով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Այս առանձնահատկությունը հնարավորություն է տալիս ապահովել գիտական արդյունքների լայն տարածում ինչպես Հայաստանի ներսում, այնպես էլ միջազգային մասնագիտական շրջանակներում:

Տասը տարիների ընթացքում ամսագիրը միավորել է գիտնականների, իրավաբանների և ոլորտի փորձագետների, նպաստել իրավական մտքի զարգացմանը և ծառայել որպես գիտակրթական համագործակցության կամուրջ: Այն կարևոր դեր է խաղում նաև Կրթահամալիրի գիտական և կրթական գործընթացների հարստացման գործում՝ խթանելով հետազոտական աշխատանքը և մասնագիտական աճը:

Հոբելյանական տարում «Օրենքի պատվար» ամսագիրը շարունակում է իր առաքելությունը՝ հավատարիմ մնալով գիտական որակի, արդիականության և մասնագիտական բարձր չափանիշներին՝ միաժամանակ բաց լինելով նոր գաղափարների, համագործակցությունների և զարգացման նախաձեռնությունների համար:

Հայարփի Քեշիշյան
ՄՀ և ՀԿ բաժնի պետի ՊԺԿ

ՀՀ ՆԳՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ՝ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

2026 թվականի ապրիլի 14-ին և 16-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի նախաձեռնությամբ կազմակերպվել են առաջին օգնության թեմայով ուսուցման դասընթացներ, որոնք իրականացվել են «Հայաստանյան խաղաղության նախաձեռնություն» կազմակերպության կողմից:

Դասընթացների նպատակն էր բարձրացնել ՆԳՆ ոստիկանության և փրկարար ծառայության ծառայողների կարողություններն առաջին օգնության ոլորտում և նպաստել համապատասխան գիտելիքների տարածմանը՝ հատկապես առաջնահերթ խոցելի տարածքներում արագ և արդյունավետ արձագանք ապահովելու համար:

Ուսուցումն իրականացվել է տեսական և գործնական բաղադրիչների համադրությամբ, որի ընթացքում մասնակիցները հնարավորություն են ունեցել ոչ միայն ծանոթանալու առաջին օգնության հիմնական սկզբունքներին, այլև կիրառելու դրանք տարբեր իրավիճակների սիմուլյացիոն վարժանքների միջոցով: Միաժամանակ, քննարկվել են սրտի կանգի, շնչառական խանգարումների, արյունահոսության դադարեցման և այլ արտակարգ իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերման առանձնահատկությունները, մեթոդները: Առանձին անդրադարձ է կատարվել նաև դեֆիբրիլատոր սարքին, որը կենսական նշանակության բժշկական սարք է և օգտագործվում է սրտի կանգի դեպքում՝ սրտի բնական ռիթմը վերականգնելու նպատակով:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը կարևորում է նմանատիպ նախաձեռնությունների շարունակական իրականացումը՝ նպատակ ունենալով զարգացնել ծառայողների մասնագիտական հմտությունները և բարձրացնել հանրային անվտանգության ապահովման արդյունավետությունը:

Դասընթացների ավարտին մասնակիցներին տրամադրվել են հավաստագրեր:

ԱՄՓՈՓՎԵՑ ՍԻՐՈ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ՄԻԱՄՍՅԱԿԸ

Կինը լույս է, գարնան շունչ,
Նրա սիրով է կյանքը փունջ:

Գարունը միշտ գալիս է նոր հույսի պես: Աշխարհն արթնանում է քնից: Ջմռան մուգ ու սառը, անշուք գույներին փոխարինում են վառ գույները, որոնք ջերմացնում են սիրտդ, և երգում է հոգիդ: Այդ վերածնվող գարնան մեջ առանձնահատուկ տեղ ունեն կանանց՝ սիրո և գեղեցկության խորհրդանիշներին նվիրված տոները՝ մարտի 8-ը և Մայրության և գեղեցկության միջազգային օրը: Այս օրը պարզապես գեղեցիկ ծաղիկների և շնորհավորանքների օր չէ: Այն մայրության և գեղեցկության տոն է, որը նշվում է ամեն տարի ապրիլի 7-ին: Ըստ Հայ առաքելական եկեղեցու տոնացույցի՝ ապրիլի 7-ը Սուրբ Աստվածածնի Ավետման օրն է: 1995 թվականից ապրիլի 7-ը ներառվել է Հայաստանի ազգային տոնացույցում: Դա օր է, երբ մենք հիշում ենք, որ կինն է կյանքի աղբյուրը, ընտանիքի սիրտը, աշխարհի ջերմությունը: Ապրիլի 7-ը պարզապես օր չէ: Այն շնորհակալության օր է բոլոր այն կանանց, ովքեր իրենց հոգատարությամբ և սիրով լցնում են մեր կյանքը:

Կինը նման է գարնանը՝ որտեղ նա կա, այնտեղ կյանքը ծաղկում է: Նրա սերը լուռ է, բայց ուժեղ: Եվ հենց այդ պատճառով ապրիլի 7-ը ոչ միայն տոն է, այլ նաև խոնարհում՝ կնոջ ուժի, գեղեցկության և անսահման սիրո առաջ: Կնոջ հետ են կապում դիվային արարքներ, բայց նույն կնոջն է տրված նոր կյանք պարգևելու աստվածահաճո շնորհը:

Մենք խոնարհվում ենք կնոջ գեղեցկության, ուժի և անսահման սիրո առաջ, որովհետև աշխարհն ավելի բարի ու լուսավոր է հենց կանանց շնորհիվ:

Հովհաննիսյան Աստղիկ

ԽՄԲԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹՐԵՅՆԻՆԳ «ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՍԹՐԵՍԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ

Ապրիլի 3-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման «Ոստիկանական գործ» մասնագիտության «Համայնքային ոստիկան» որակավորման արհեստագործական կրթական ծրագրի (առկա անվճար ուսուցում) 2-րդ դասակի սովորողների մոտ «Անձի և տարիքային հոգեբանություն ՀՈ գործունեության մեջ» առարկայի շրջանակներում կազմակերպվել և անցկացվել է խմբային հոգեբանական թրեյնինգ՝ «Ծառայողական սթրեսի հաղթահարման մեխանիզմներ» թեմայով:

Թրեյնինգը վարել են ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոնի պետ, հ.գ.թ., դոցենտ Ն. Նազարյանը և նույն ամբիոնի ավագ դասախոս, հոգեբան Մ. Կարապետյանը:

Հանդիպման նպատակն էր զարգացնել ծառայողների հոգեբանական կայունությունը և կատարելագործել հուզական ինքնակարգավորման հմտությունները ծառայողական գործունեության համատեքստում, ինչն ուղղված էր սթրեսային իրավիճակներում հավասարակշռված գործելու կարողունակության և աշխատանքի արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Թրեյնինգը կառուցված էր տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ներդաշնակ համադրությամբ: Թրեյնինգի ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել սթրեսի հաղթահարման ադապտիվ կառուցողական ռազմավարություններին, որոնք անհրաժեշտ են մասնագիտական արդյունավետությունը բարձր լարվածության պայմաններում պահպանելու համար: Դասընթացի տեսական դրույթներն ամրապնդվել են գործնական վարժություններով, որի արդյունքում մասնակիցները սովորել են կիրառել շնչառական կարգավորման տեխնիկաներ և իրավիճակի վերահմաստավորման գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս հուզական արձագանքը վերափոխել մասնագիտական, վերահսկելի արձագանքի:

Ինտերակտիվ ձևաչափով անցկացված հանդիպումը ևս մեկ անգամ ընդգծեց հոգեբանական պատրաստվածության առանցքային դերը ոստիկանի մասնագիտական պատրաստականության համատեքստում:

ԼՃԱՓԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԸ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

2026 թվականի ապրիլի 10-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը ճանաչողական այցի շրջանակներում հյուրընկալել էր Գեղարքունիքի մարզի Լճափ գյուղի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտներին՝ դասղեկ Ս. Սարգսյանի ուղեկցությամբ:

Այցի ընթացքում աշակերտները, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ Արշակ Ավագյանի ուղեկցությամբ, շրջել են Կրթահամալիրի տարածքում, ծանոթացել կրթական միջավայրին, ուսումնական գործընթացների կազմակերպմանը, ինչպես նաև սովորողների առօրյային:

Աշակերտների շրջայցը եզրափակվել է Ոստիկանության պատմության թանգարանում: Թանգարանի աշխատակից Դ. Հովսեփյանը ներկայացրել է սովետական միլիցիայի շրջանը, ՀՀ անկախության տարիներից ի վեր ՆԳՆ տարբեր ստորաբաժանումների հայրենանվեր ծառայությունը՝ իրավակարգի ապահովման և հանցագործությունների դեմ պայքարում:

Այցի նպատակն էր դպրոցականներին հնարավորություն ընձեռել անմիջականորեն ծանոթանալու Կրթահամալիրի գործունեությանը, ձևավորելու իրավագիտակցության բարձր մակարդակ, ինչը կնպաստի պատասխանատու և օրինապաշտ քաղաքացիների դաստիարակությանը:

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՆՎԻՐՈՒՄ

Մասնագիտության ընտրությունը կյանքի կարևորագույն և առանձնահատուկ փուլ է, քանի որ անձը թևակոխում է կյանքի նոր շրջան, որտեղ կյանքն ավելի գունառատ է դառնում, և մեծանում է պատասխանատվության զգացումը: Ես ընտրեցի ոստիկանի մասնագիտությունը, որովհետև միշտ ցանկացել եմ լինել այնտեղ, որտեղ արդարությունը պարզապես բառ չէ, այլ գործ, որտեղ կարող եմ իմ գործունեությամբ նպաստել արդարության վերականգնմանը: Ինձ համար սա պարզապես աշխատանք չէ, այլ պատասխանատվության բարձր զգացում մարդկանց անվտանգության ապահովման և նրանց կողմից վստահության ձեռքբերման գործում: Այս մասնագիտությունը պահանջում է ուժ, համբերություն և վճռականություն: Եվ հենց այդ հատկանիշներն են ինձ մոտիվացնում առաջ շարժվել և էլ ավելի հմտանալ:

Ոստիկանի ուղին հեշտ չէ, բայց այն լի է իմաստով, որտեղ ամեն օր հնարավորություն ունես ինչ-որ մեկի կյանքում փոփոխություն մտցնելու: Այս մասնագիտության մասին առաջին անգամ մտածել եմ, երբ դեռ 4-րդ դասարան էիգ դա իմ բաղձալի երազանքն էր, և այսօր այն դարձավ իրականություն: Փոքրուց ես եղել եմ կարգապահ, պատասխանատու և պարտաճանաչ, որն էլ ինձ տարել է դեպի այս ոլորտ, քանի որ հենց այս մասնագիտությունն էլ պատասխանատվության, կարգապահության, ուժեղ կամքի ձևավորման խորհուրդ ունի: Այսինքն՝ այն լոկ աշխատանք չէ, այլ նաև ձևավորում է մարդուն՝ դարձնելով պատասխանատու և կայուն:

Կարծում եմ՝ ես ունեմ պատասխանատվություն, համբերատարություն, արագ կողմնորոշվելու և ճիշտ որոշումներ կայացնելու ունակություն, որոնք համապատասխանում են այս ոլորտին և օգնում ճիշտ արձագանքել և օբյեկտիվ գնահատական տալ տարբեր իրավիճակներում: Այս մասնագիտությունն ինձ համար բավականին հետաքրքիր է, այն ներառում է ոչ միայն տեսական գիտելիքներ, այլ նաև գործնական հմտություններ:

Մասնագիտությունս ընտրելու հարցում որոշում կայացրել եմ ես, և այդ հարցում ինձ միշտ աջակցել ու խորհուրդներ է տվել մայրս, օգնել՝ հասկանալու այդ ոլորտի կարևորությունն ու պատասխանատվությունը: Իմ ընտանիքում չկան ոստիկաններ, և ես այս ոլորտն ընտրել եմ անչափ սիրելով ու հասկանալով, որ օգնելու եմ մարդկանց պաշտպանել իրենց իրավունքներն ու ազատությունները և կարողանալ կանխարգելել հանցագործությունները: Ակնկալում եմ դառնալ այնպիսի մասնագետ, որը մեծ վստահություն ձեռք կբերի քաղաքացիների շրջանում և պատվով կկատարի իր պարտականությունները:

Մեր ժամանակներում այն ամենապահանջված մասնագիտություններից է, քանի որ հասարակությունը չի կարող լիարժեք գործել առանց օրենքի պահպանման և անվտանգության ապահովման: Եթե հնարավորություն լիներ վերադառնալ անցյալ, միևնույն է, ես կընտրեի այս մասնագիտությունը: Այս ոլորտում ինձ հիասթափեցնող բանն այն է, որ երբեմն մարդիկ ամբողջությամբ չեն հասկանում աշխատանքի բարդությունն ու պատասխանատվությունը: Դրսից այն կարող է թվալ պարզ կամ միայն կարգապահական աշխատանք, բայց իրականում այն շատ ավելի խորքային և ծանր է: Չնայած այդ դժվարություններին՝ ես շարունակում եմ չկոտրվել, շարժվել առաջ ու ձգտել բարձունքների:

Աննա Զարգարյան
Ոստիկանության սերժանտ

ԵՐՋԱՆԻԿ ԼԻՆԵԼՈՒ ԻՄ ԲԱՆԱՁԵՎՆ Է ԳՆԱՀԱՏԵԼ ՈՒՆԵՑԱԾԸ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԼԻՆԵԼ

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման «Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում (Փրկարարական գործ)» մասնագիտության 4-րդ կուրսի սովորող Արգիշտի Ավետյանի հետ: Կրթահամալիրի «Բանավեճի ակումբի» անդամ է, արժանացել է բանավեճ-մրցույթի «Լավագույն խոսնակ» անվանակարգին:

-Ողջույն, Արգիշտի՛ ջան, կպատմե՞ս քո մասին, քո դպրոցական տարիներից...

- Ես կրթություն եմ ստացել հինգ դպրոցում, որոնցից մեկը գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում, իսկ մնացածը՝ Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում: Այդ իսկ պատճառով ունեցել եմ շփում և ծանոթություն տարբեր ազգերի, մշակույթների և մարդկանց տեսակների հետ: Յուրաքանչյուր դպրոցի մասին պատմելն անհրաժեշտություն կստեղծի գրել մի ամբողջ գիրք, քանի որ ամեն դպրոց ունի իր մեծ պատմությունը՝ շղթայական կապ ունենալով մնացածի հետ:

Զբաղվել եմ բռնցքամարտով, կարատեով, քիքբոքսինգով և հունահռոմեական ըմբշամարտով:

-Ի՞նչ նպատակներ ունեք: Ինչպիսի՞ն են դրանց հասնելու ուղիները:

-Նպատակներս կախված են կյանքի փուլերից, և յուրաքանչյուր փուլում ունենում եմ նոր նպատակներ, իսկ ճանապարհը մեկն է, որով առաջնորդվելով՝ անցնում եմ այդ փուլերի միջով:

-Ինչպե՞ս եք նախընտրում առաջ շարժվելգ միայնա՞կ, թիմո՞վ, թե՞ հավաքական ուժով:

-Ես երբեք միայնակ չեմ լինում հոգեպես, իսկ ֆիզիկապես երբեմն լինում են իրավիճակներ, երբ պետք է միայնակ լինել, քանի որ հավաքական ուժ ձևավորելիս յուրաքանչյուր անհատ իր իսկ կամքով է անում քայլը դեպի դա:

-Ի՞նչ է ձեզ համար մրցակցությունը: Ինչպե՞ս են գործում նշաձող դնելու և դրան հասնելու համար խթանները:

-Մրցակցություն հասկացողությունն ինձ համար ընդունելի է միայն «մարտ ստվերի հետ» կարգախոսով, քանի որ կյանքում ամենավտանգավորն այն է, երբ այդ ստվերը հաղթում է քո իսկական «ես»-ին:

Իսկ խթանն այն պահն է, երբ նկատում եմ, որ ստվերն ավելի ուժեղ է պայքարում, այսինքն՝ ես մեկ փուլ վեր եմ բարձրացել:

- Կյանքի միապաղա՞ղ ընթացք եք նախընտրում, թե՞ բազմաշերտ՝ ներառյալ բուհը, ընտանիքը, նախասիրությունները և ընկերները:

-Ես չեմ ընտրում, սակայն գիտեմ՝ եթե միապաղաղ է, ուրեմն ինչ-որ բան դեռ չի հասել իր բնականոն ավարտին, իսկ եթե հասել է, ուրեմն այլևս միապաղաղ չէ:

-Կպատմե՞ք, թե ինչպես է անցնում ուսումնառությունը ՆԳՆ կրթահամալիրում:

- Ակադեմիական կրթության մեծ մասն ստացա ճԿՊԱ-ում, որն անմոռանալի և թանկ էր, և այնպես ստացվեց, որ ավարտական տարին եկա ՆԳՆ կրթահամալիր, որի համար շատ ուրախ եմ: Այն նույնպես ինձ պարգևեց բազմաթիվ դրական զգացմունքներ, քանի որ ցանկացած հարցի պատասխան, որը պետք է տրվեր և ստանար վերջակետ, ես ստացա այս բուհում, և իմ ունեցած 180՝ հայացքը շրջվեց՝ նայելով մյուս 180՝-ին, այդպիսով ունենալով ամբողջ 360՝-ը:

-«Փոքրիկ իշխան». ինչպիսին է քո ստեղծած այլ մոլորակը:

- Կա մի գիրք՝ Հազար դեմքով հերոսը, որի հեղինակը Ջոզեֆ Քեմբելն է: Գրքի հայերեն թարգմանությունը լայնորեն հայտնի չէ, դրա համար անվանումը կներկայացնեմ նաև ռուսերեն՝ «Тысячелукий герой»: Այս գիրքը պատմում է հերոսի ճանապարհի մասին, և կարդալով՝ պարզ է դառնում, որ հերոսի ճանապարհը տարբեր մշակույթներում, առասպելներում, ֆիլմերում, մուլտֆիլմերում և, վերջապես, իրական կյանքում մեկն է, ինչպես նաև «Փոքրիկ իշխան»-ինը: Սակայն այդ հարցը, ըստ իս, նպատակահարմար է ուղղել հերոսի, ոչ թե ինձ, իսկ մեր երկրում հերոսները բազմաթիվ են:

-Քո ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը:

-Իմ ընթերցած գրքերն ուղղորդում են ունեցել, չեն եղել պատահական, և յուրաքանչյուր գիրք յուրովի տպավորիչ է: Չկա առանձնահատուկ մեկ գիրք, քանի որ կյանքի տարբեր փուլերում դրանք իրենց մասին հիշեցնում են ինձ: Իսկ թե որն է ամենաթանկը և կարևոր գիրքը, դա արդեն մեծ քննարկման հարց է:

-Ի՞նչ անելիքներ ունեք ապագայում և ի՞նչ հեռանկար եք տեսնում:

-Հեռանկար չեմ կարող տալ, բայց պատրաստ եմ կյանքի ճանապարհով անցնելիս լսել բոլորին և սովորել ցանկացած մարդուց, ձեռք բերել նոր ընկերներ այդ ճանապարհին և սիրել յուրաքանչյուրին, քանի որ ինձ համար վատ մարդիկ չկան:

-Նախասիրություններ. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

-Ապրող մարդու համար արդյո՞ք կյանքն այնպիսին է, ինչից արժե կտրվել՝ այն պարագայում, երբ ինչ էլ անենք, դա իրական կյանքում է:

-Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

-Հայրս է ուղղորդել:

-Եթե հնարավորություն ունենայիր փոխելու մասնագիտությունդ, ի՞նչ կընտրեիր:

-Ներկայումս էլ ունեմ այդ հնարավորությունը: Իսկ եթե հարցը ֆանտաստիկ բնույթի է՝ հետ գնալ անցյալ, փոխել մասնագիտությունը, մաքրել հիշողությունները և ստանալ նոր գիտելիքներ, ապա չէի փոխի:

-Ո՞րն է երջանիկ լինելու քո բանաձևը:

-Գնահատել ունեցածը և շնորհակալ լինել:

-Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

-Կյանքը:

Բլից հարցեր

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Օրից է կախված:

- Օրն սկսում ես ժամը...

- Օրից է կախված:

- Սիրածդ աֆորիզմը:

- Չկա կոնկրետ մեկը:

- Սիրելի զբաղմունքդ:

- Բազմաթիվ են:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Հարցազրույցի ժամանակ խորհուրդ տալ՝ նշանակում է դիմել բոլորին, ովքեր կարող են տեսնել այս նյութը: Ներկայումս դա մեծ պատասխանատվություն է կրում իր մեջ, իսկ ես այս պարագայում նախընտրում եմ լինել խորհրդի հասցեատեր, ոչ թե հեղինակ:

Հարցազրույցը վարեց միջազգային բաժնի առաջատար մասնագետ Հասմիկ Ամիրխանյանը

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ «ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ)» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ



Լույս է տեսել «Հաղորդակցման հոգեբանություն (ոստիկանության ծառայողների համար)» ուսումնական ձեռնարկը, որի հեղինակն է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ՓԾ և ճԿ ուսումնական ստորաբաժանման ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոնի պետ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Նաիրա Նազարյանը:

Ձեռնարկում դիտարկվում են մասնագիտական գործունեության մեջ հա-ղորդակցման հոգեբանական առանձնահատկություններն ու օրինաչափությունները՝ շեշտադրելով ոստիկանության ծառայողների գործունեության մեջ դրանց կիրառական նշանակությունը:

Տարաբնույթ մարդկանց հետ ամենատարբեր իրավիճակներում առնչությունների անհրաժեշտությունը կարևորում է ոստիկանության ծառայողների հաղորդակցական կարողունակությունների դերն ու նշանակությունը, ինչպիսիք են հոգեբանական կապ և վստահելի հարաբերություններ հաստատելու, զրույց վարելու և տեղեկատվություն ստանալու, գրագետ լսելու, սեփական և զրուցակցի հուզական վիճակը կարգավորելու, համարժեք հոգեբանական ազդեցություն գործելու, սուտը և թաքցվող հանգամանքները բացահայտելու և այլ կարողունակությունները:

Ստեղծագործում են մերոնք

ԵՍ ԱՅՆ ԵՄ, ԻՆՉ ԿԱՄ

Ես այն եմ, ինչ կամ, ավելին չկամ,
Կյանքին համընթաց ես գիտեմ քայլել
Ինչ-որ չար ուժից սայթաքել, ընկնել,
Բայց չվհատվել...
Ցավին դեմ գնալ ու առաջանալ,
ԵՎ ընկած տեղից նորից բարձրանալ,
Ուժեղին գիտեմ, հարգել, սատարել,
Իսկ թույլ էակին՝ երբե՛ք չնեղել,
Հերոսին գիտեմ սիրել ու պաշտել,
Նրա մոր առաջ գլուխ խոնարհել,
Պապերիս սիրած տունը չլքել,
Եվ հայրենիքից մի բուռ հողի տակ
Հավերժ ծրարվել:

Ես այն եմ՝ ինչ կամ, ավելին չկամ,
Մեկ խենթ եմ, կարծես՝ անհասկանալի,
Բայց հաճախ պարզ եմ ու տեսանելի,
Հողմերի գրկում կարող եմ ապրել,
Իմ քայլերի մեջ գիտեմ խիզախել,
Արդարի կողքին մշտապես կանգնել,
Ընկերոջ համար մարտի բռնվել,
Խավարում լույսը փնտրել ու գտնել,
Խորդուբորդ ճամփով՝ այդ լույսին հասնել,

Նրա շողքերից հուր կրակ վառել,
Դողացող սրտով դեպի տուն վազել,
Հերոսի մորը գտնել ու ասել,
Կրակ եմ բերել երկնքի սրտից,
Անմահ տղերքի հոգու արևից
Որ կյանքի լույսը նրանց աչքերի
Ջեր սրտում հավերժ, խաղաղ ծվարվի:
Ես այն եմ, ինչ կամ, ավելին չկամ...

Կարինե Կիրակոսյան

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Ճանապարհային երթևեկության կանոններ

Պայծառ օր էր: Մի բեռնատար, ձի ու սայլակ, ինչպես նաև մոտոցիկլավարը լուսացույցի մոտ սպասում են կանաչ լույսի:

Երբ լույսը փոխվում է և դեղին է դառնում, բեռնատարի վարորդն արագացնում է ընթացքը, ձին վախենում է և կծում մոտոցիկլավարի ականջը:

Հարց՝ ո՞վ է այդ իրավիճակում խախտել ճանապարհային երթևեկության կանոնները:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 100 օրինակ:
Ստորագրված է տպագրության 24.04. 2026թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան